«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 6

23.02.2021թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացիկ վիճակի վերաբերյալ.

1.1 ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

- ցերեկային ուսուցման ուսանողներին և մագիստրանտներին (այդ թվում՝ քննություններին չներկայացած, չթույլատրված) տալ լրացուցիչ ժամանակ մինչև սույն թվականի մարտի 5-ը՝ 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարների և առարկայական պարտքերը մարելու, կրեդիտային պարտքերը նվազեցնելու համար:

- նույն առարկայից երեք անբավարար գնահատականներ ստացած ուսանողներին առարկաների վերահանձնման հնարավորություն չընձեռել, ձևակերպել որպես կրեդիտային պարտք՝ սահմանված կարգով:

- ավարտական կուրսերի ուսանողների ուսման վարձավճարի պարտքերի մարման համար, սահմանված կարգով, ձևակերպել պարտավորագրեր:

1.2. Հանձնարարել դեկաններին, ուսման վարձավճարների ժամանակին հավաքագրման նպատակով ուսանողների հետ տանել համապատասխան բացատրական աշխատանքներ:

1.3. ԱԲԱ ֆակուլտետի 2019-2020 ուս. տարվա բուժ. 4-րդ կուրսի ուսանող Հարությունյան Արզումանին տալ լրացուցիչ հնարավորություն՝ 2019-2020 ուս. տարվա ուսման վարձավճարի և առարկայական պարտքերը մարելու համար:

2. Համալսարանի ստորաբաժանումներում 2019-2020 ուս. տարվա քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց ՀՈՒԴ-ի, Սիսիանի և Վանաձորի մասնաճյուղերի ուսանողներին տալ լրացուցիչ ժամանակ մինչև սույն թվականի մարտի 5-ը՝ 2019-2020 ուս. տարվա ուսման վարձավճարի և առարկայական պարտքերը մարելու, կրեդիտային պարտքերը նվազեցնելու համար:

3. Թեստերի որակի և բարդության մասին ուսանողների կողմից ստացված բողոքների վերաբերյալ.

3.1. Հանձնարարել ՈՒԳԿ վարչությանը և դեկաններին մեկ շաբաթյա ժամկետում, ըստ ամբիոնների, վերլուծել քննական թեստերի, հարցաշարերի համապատասխանությունն առարկայական ծրագրերին, դրանց բարդության աստիճանը, պարզել խնդիրները և ներկայացնել առաջարկություններ:

3.2. Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Դ. Հայրապետյանին, ՏՏ կենտրոնի պետ Վ. Մելքոնյանին, դեկաններին և ամբիոնի վարիչներին.

- մեկ շաբաթյա ժամկետում թեստերում առկա խնդիրների բացահայտումից և համապատասխան լուծումներ տալուց 10 օր անց իրականացնել թեստերի փորձարկումներ,

- փորձարկել նաև 2020-2021 ուս. տարվա երկրորդ կիսամյակի թեստերը:

4. 2020թ պատերազմի մասնակից ուսանողների նկատմամբ առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

5. Դասընթացներից հեռակա ուսուցման մագիստրանտների մեծաթիվ բացակայությունների (30%-ից ավելի) վերաբերյալ.

Հանձնարարել ԱՏ ֆակուլտետի դեկան Է. Ղազարյանին, համապատասխան ամբիոնի վարիչներին, սեղմ ժամկետում սահմանված կարգով կազմակերպել բացակայությունների լրացումներ և թույլատրել մագիստրանտներին մասնակցելու քննություններին:

6. Անասնաբուժություն մասնագիտության անասնաբուժական սանիտարական փորձաքննություն կրթական ծրագրի 2-րդ կուրսի մագիստրանտ Ռիմա Էլբակյանի՝ քննություններին մասնակցելու խնդիրների վերաբերյալ.

6.1. Կորոնավիրուսի համավարակով և տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված, ՀՀ-ից դուրս գտնվող ՀԱԱՀ ուսանողներին և մագիստրանտներին ընձեռել Zoom հարթակով քննություններ (ստուգարքներ) հանձնելու հնարավորություն (դիմումի առկայությունը պարտադիր է):

6.2. Հանձնարարել դեկաններին, խստորեն վերահսկել առ-ցանց քննությունների կազմակերպման փաստաթղթավորումը:

7. Քննական թեստերի կազմման, ներկայացման խնդիրների վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին և ամբիոնի վարիչներին.

- խստորեն վերահսկել ՏՏ կենտրոն ամբիոնների կողմից թեստերի ներկայացման ժամկետները, թեստերի ու հարցաշարերի համապատասխանությունը առարկայական ծրագրերին,

- խստորեն վերահսկել թեստերի գաղտնիությունը, ինչպես նաև Moodle հարթակից ամբողջական թեստերը հանելու և միայն թեստի նմուշը թողնելու գործընթացը:

8. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման եվ վճարման կարգ»-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների

հաշվարկման եվ վճարման կարգ»-ում առաջարկվող փոփոխությունները երաշխավորել ՀԱԱՀ գիտական խորհրդի հաստատմանը:

9. 2016թ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից և մարտական հերթապահություն իրականացրած ՀՈՒԴ ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.

9.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2019-2020 ուստարվա վճարովի ուսուցման համակարգի 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողությունների մասնակցած ներքոնշյալ ուսանողների համար սահմանել զեղչ տարեկան ուսման վարձի 50%-ի չափով:

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրան.*	*Կրթական ծրագիր, լուրս*	*Տար. ուսմ. վարձ (դրամ)*	*Փոխհատ. չափ (դրամ)*
1	Բրուտյան Մամիկոն Աշոտի	Գյուղ. հումքի և պարեն. փորձաքն., ստանդ. և սերտ. - 3	340.000	170.000
2	Ծուղունյան Յուրիկ Արայիկի	Ագրոնոմիա, սել. և գենետիկա - 3	330.000	165.000
3	Նազարյան Դավիթ Գագիկի	Անասնաբուժական սան. փորձաքն. - 5	230.000	115.000

9.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2019-2020 ուստարվա վճարովի ուսուցման համակարգի 2016թ. քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ներքոնշյալ ուսանողների համար սահմանել զեղչ տարեկան ուսման վարձի 30%-ի չափով:

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Կրթական ծրագիր, կուրս*	*Տարեկ. ուսմ. վարձ (դրամ)*	*Փոխհատ. չափ (դրամ)*
1	Մկրտչյան Ֆելիքս Աշոտի	Պահած. և սննդ. տեխն. - 4	280.000	84.000
2	Կարապետյան Տիգրան Ժիրայրի	Կենսագործ. Անվտանգ. - 2	330.000	99.000
3	Հովհաննիսյան Արման Կարենի	Պահած. և սննդ. Տեխն. - 4	340.000	102.000
4	Կիրակոսյան Հայկ Հակոբի	Ֆինանսեր /ըստ ոլորտի/ - 2	440.000	132.000
5	Առաքելյան Գևորգ Էդուարդի	Ապրանքագիտ. - 3	440.000	132.000
6	Կարապետյան Կարապետ Առաքելի	Գյուղատ. մեք., մեք. և սարք. - 2	330.000	99.000

10. ՈՒսանողական իրավունքները վերականգնելու համար դիմումներ ներկայացրած ուսանողների խնդրի վերաբերյալ.

Համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում վերականգնել ստորև ներկայացված ուսանողների ուսանողական իրավունքները.

1. Խանփերյան Տիգրան Աշոտի – Բույսերի պաշտպանություն,
2. Տոնոյան Անդրանիկ Արտակի – Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն,

3. Մինասյան Վահե Սամվելի – Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում,

4. Գալստյան Մայքլ Ռաֆիկի - Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում,

5. Ղարիբյան Էդուարդ Մարատի – կենսագործունեութ. անվտանգություն,

6. Մուրադյան Ռազմիկ Ռուստամի - Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում:

11. 2019-2020 ուս. տարվա ուսանողների ուսման վարձավճարի զեղչերի սահմանման վերաբերյալ.

Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2019-2020 ուստարվա վճարովի ուսուցման համակարգի ներքոնշյալ ուսանողների համար սահմանել ուսման վարձի զեղչ հետևյալ չափով՝ համալսարանի միջոցների հաշվին:

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Կրթական ծրագիր, կուրս	Տարեկան ուսման վարձ	Փոխհա-տուցման չափ (%)	Փոխհա-տուցման չափ (դրամ)
1	Սարգսյան Լիլիթ Գեղամի	Ագրոբիզնես և շուկայաբան. - 5	400.000	30	120.000
2	Պողոսյան Հովսեփ Մանուկի	Հողաշինարար. և հողային կադաստր - 5	350.000	30	105.000
3	Մկրտչյան Գայանե Խաչատուրի	Հաշվապ. հաշվառում և հարկ. /ըստ ոլորտի/ - 3	440.000	30	132.000

12. Երկրագործության ԳԿ հայցորդ Հայկ Ռոլանդի Ղազարյանի հայցորդական ծրագրում ներառված պարտադիր առարկաների դասընթացների վարձավճարի զեղչ սահմանելու վերաբերյալ.

Երկրագործության ԳԿ հայցորդ Հայկ Ռոլանդի Ղազարյանի հայցորդական ծրագրում ներառված պարտադիր առարկաների դասընթացների վարձավճարը զեղչել 30%-ի չափով:

13. 2018-2019 ագրոնոմիա մասնագիտության 5-րդ կուրսի ուսանող Սևադա Սահակի Հովհաննիսյանի ուսանողական իրավունքների վերականգնման և ուսման վարձավճարի փոխհատուցման վերաբերյալ.

Հարցի քննարկումը հետաձգել և կրկին անդրադառնալ Ս.Ս. Հովհաննիսյանի վերականգնողական փուլից և հաշմանդամության կարգի ձևակերպումից հետո:

14. Նախորդ տարիներին դիպլոմային ավարտական աշխատանքները չպաշտպանած և 2020թ պատերազմի մասնակից ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման վերաբերյալ.

Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Դ. Հայրապետյանին, ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին և իրավաբան Մ. Վարդանյանին՝ ուսումնա¬սիրել հարցը և ներկայացնել հաջորդ ռեկտորատի քննարկմանը:

15. ՀԱԱՀ-ում ներկայումս իրականացվող ծրագրերի վերաբերյալ.

15.1. Ընդունել ի գիտություն:

15.2. Հանձնարարել դեկաններին՝ համալսարանի գիտական կենտրոնների և ուսումնափորձնական տնտեսությունների ղեկավարների հետ ճշտել գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ժամկետները և կազմակերպել պրակտիկաներ:

16. ՀԱԱՀ-ում՝ 2020թ պատերազմում զոհված ՀԱԱՀ ուսանողների հիշատակը հավերժացնող անկյուն ստեղծելու վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին լրատվության բաժին ներկայացնել պատերազմի մասնակից, պարգևատրված ուսանողների տվյալները:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ